

## Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ե Ր

ԳԱՆՁԱՐԱՆԻ ՆԱԻԹԱԲԵՐ ՀՈՂԵՐԻ ՊՈՒԴԱՎՃԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Նաւթի գինը իր անցեալ տարուայ 18 կոպ. բարձրութիւնից ընկնելով, ոչ միայն յուսախար արաւ երկու վերջին տարիներումս արքունի հողեր վերջնողներին, այլ, եթէ մի տարի էլ այսպէս շարունակուի, վերջիններիս մեծամասնութիւնը ստիպուած պիտի լինի կորցնել իր՝ մինչև օրս արած ծախսերը և յետ կանգնել՝ խզելով գանձարանի հետ իր կապած պայմանը: Հասկանալի է որ այսպիսի պայմաններում մարդիկ ամեն ճիգ թափում են վտանգից մի կերպ ազատելու իրանց ունեցածը: Եւ ահա այս վերջին կարգի նաւթագործները մի քանի ամիս առաջ գիմել էին համապատասխան միջնորդութեան, խնդրելով փոխել իրանց կապած պայմանները, ի հարկէ թեթևացնելով իրանց ծանր, նոյն իսկ անելանելի գրութիւնը:

Ընթերցողի համար պարզ է, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի գործի այս կամ այն եւթը ոչ միայն բազուղիների համար, այլ նոյն իսկ մեր երկրի ազգաբնակչութեան մի որոշ մասի համար, որ շատով թէ քշով մասնակցում է նաւթային գործերում:

Բնականաբար ամբողջ կովկասում հետաքրքրւում են այդ հարցով, իսկ մասնաւորապէս Բագուում:

Տեղական «Нефтяное Дѣло» հանդիսում սեպտեմբերից սկսած արդէն չորս ընդարձակ յօդուած է լոյս տեսել, որոնցից երկուսը, T ստորագրութեամբ, այն տեսակէտն են պաշտպանում, թէ միջնորդութիւնը չը պիտի յարգի խնդրատուների առաջարկութիւնը: Ընդհակառակը, ինժեներ Կ. Ստախսեան իր երկու յօդուածով աշխատում է ապացուցանել, որ ոչ միայն խընդ-

րատունների, այլ նոյն իսկ գանձարանի շահը՝ պահանջում է փոխել կայացած աճուրդի պայմանները:

Խնդրատունները առաջարկում են, որ գանձարանը իրանցից պուզահարկի փոխարէն ստացած նաւթի որս շտկուած բաւականանայ, հաւասարեցնելով 1 կոպ. պուզահարկը—նաւթի 50/0-ին: Երկու վերջին աճուրդներում գանձարանի հողերը, ինչպէս յայտնի է, շատ թանգ պուզահարկերով են վերցրած 5-ից —12 կ.: Նաւթի այժմեան գներով (մօտ 7 կ.), պարզ է որ այդ պայմաններով վերցնողների մեծամասնութիւնը չեն կարող առանց վնասի գործել: Հասկանալի է նոյնպէս որ պայմանի փոխելը գանձարանի համար նշանակում է յօժարակամ նաւթագործ-խնդրատուններին զիջանել իր ստանալիքի  $\frac{2}{3}$  մասը: Օրինակ, եթէ 12 կ. վերցնողը 100 պ. նաւթի համար պիտի վրձարէր 12 ո., այժմ խնդրում է, որ գանձարանը՝ իրանից փողի փոխարէն ընդունի 12X5 տոկոս. նաւթ, այսինքն 60 պուզ, որ այժմեան գներով կ'անի մօտ 4 ո.: Ահա ինչ են ուզում պ. պ. նաւթագործները: Բայց արդեօք աճուրդի պայմանները կարելի է փոխել աճուրդից յետոյ, յետին թուով:

Պետութեան (և հասարակական հիմնարկութիւնների) երկմուտքի աղբիւրները մասնաւոր մարդկանց յանձնելու աճուրդը համարում է ամենալաւ միջոց թէ գանձարանի և թէ մասնաւոր մարդկանց շահերի տեսակէտից, որովհետև բոլոր ուրիշ միջոցներից աճուրդն է, որ զժուարացնում, փակում է զանազան «անձնական բարեհայեցողութեանց» դոնները և հնարաւորութիւն է տալիս ամեն մի ցակացողի մասնակցել աճուրդին:

Բայց եթէ աճուրդի հետևանքները առհասարակ կարելի լինէր հեշտութեամբ փոփոխել, այն ժամանակ աճուրդը կը կորցնէր իր միտքը, իր նշանակութիւնը: «Չօչազ» մարդիկ միշտ աջնպիսի գներ կը նշանակեն, որ միշտ իրանց կը մնան գանձարանի գործերը (այս ղէպքում նաւթային հողերը), և հէնց որ բանից կ'երևար, որ անօգուտ, նոյն իսկ վնասաբեր է այս ինչ կամ այն ինչ գործը, «չօչազ»ները կը սկսեն միջնորդել, որ գանձարանը զիջանի, փոխի իրանց կապած պայմանը...

Վերջին երկու անգամուայ աճուրդներում հող վերցնողները բարձր պուզահարկ են խոստացել գանձարանին այն պատճառով, որ հաւատացած էին, թէ այսօր չէ վաղը նաւթի գինը անպատճառ պիտի 20 կոպ. հասնի: Եւ այս հաշուով էր, որ 12 կ. պուզահարկով հող վերցնողին դեռ մի 100 հազար ո. էլ փող էին տալիս, որ նա իր վերցրած հողը զիջէր այս կամ այն ըն-

կերութեան: Այսօր այդ հաշիւները ամենքի համար ծիծաղաշարժ և միամիտ են. իսկ այն ժամանակը երեխաներ չէին 100 հազարներ շարտողները, այլ փորձուած, «խելօք, հաշուով վաճառականներ»:

Եթէ, իսկապէս, նաւթի գինը այդքան բարձրանար, կամ նոյն իսկ 18 կ. մնար, ամեն մէկը, որ գանձարանի հողի մի կտորը գցել էր ձեռքը, արդէն ապահով, նոյն իսկ հարուստ մարդ էր լինելու, ինչպէս այդ պատահեց առաջին և երկրորդ անգամուայ աճուրդներում հող վերցնողներին, որ 1<sup>1</sup>/<sub>2</sub>—3 կ. պուղահարկով են վերցրել գանձարանի հողերը: Եւ սակայն գանձարանը այս բախտաւորներից և ոչ մէկին չասաց թէ՛ «այսինչ, դուք շատ էժան պուղահարկով էք վերցրել հողը, այժմեան պայմաններում երկուտակ էլ եթէ վճարէք, էլի լաւ փող կ'աշխատէք»: Ինչու ուրեմն, ասում են նրանք այժմ, որոնք դէմ են որ մինխտրութիւնը յարգի խնդրատունների առաջարկութիւնը, գանձարանը պիտի զիջանի յօգուտ մասնաւոր մարդկանց և վերջիններին «բաշխի» ընդհանուրի սեփականութիւնը: Եթէ նաւթագործը կը հրաժարուի իր պարտաւորութիւններից, գանձարանը՝ առանց նրա մտցրած փողը վերադարձնելու, նոր աճուրդ կը նշանակի և եթէ այժմ առաջուայ գներով չեն վերցնի, կը տայ պակասով... այսինքն այն դեմով, որ այժմ առաջարկում են գանձարանին իբրև նաւթի մի որոշ տոկոս:

Սակայն այս հիմնաւոր դատողութիւնների դէմ մի ծանրակշիռ առակութիւն են անում: Գանձարանը այս դէպքում այդքան խիստ պահպանելով օրէնքը և պայմանագիրը, արդէն «յետին թուով» փոփոխութիւններ է մտցրել առաջին կարգի աճուրդում մասնակցողների պայմանի մէջ: Բացի այդ, Գանձարանը իր հողերի մի անագին մասը առանց աճուրդի տուել է զանազան մարդկանց, դրանով նպաստելով նաւթի գների իջնելուն և ուրեմն վնասելով իրանից թանգ գներով հող վերցնողներին:

«Այժմ, ասում են խնդրատուները, դուք մեզ օրէնքն էք ցոյց տալիս, ապա ուր էր այդ օրէնքը, երբ Ռօմանու ամենալաւ հողերի մի անագին տարածութիւն տուիք Մոսկուայի կապիտալիստներին առանց աճուրդի և համարեա ձրի, ուր էր այդ օրէնքը, երբ շատ ու շատ ուժեղ մարդկանց առանց աճուրդի հողեր բաժանեցիք էժան գներով... Այդ էժանագին հողերի նաւթն է, որ այսօր խեղդում է մեզ... Եթէ նրանց համար հարաւոր էր չեղուել օրէնքից, այժմ՝ մեզ անխուսափելի մնանկութիւնից ազատելու համար էլ բարեհաճեցէք բացառութեամբ չեղուել օրէնքից»:

Հարցը չափազանց բարդուել է. դրա թէ դրական և թէ բացասական վախճանը բազմաթիւ գանգատներ պիտի յարուցանի, որովհետեւ բազմաթիւ մարդկանց համար «կեանքի և մահու» խնդիր է դա... Եւ այս բարելոնեան խառնաշփոթութիւնը ծագել է նրանից, որ սկզբից ևեթ օրինական հիմքի վրայ չի մնացել հարցը... շեղումներ, բացառութիւններ եւ տեղի ունեցել «ըստ բարեհայեցողութեան»... և, ինչպէս յայտնի է, օրէնքից մի անգամ շեղուելը՝ դժուարացնում է նորից օրինական հաստատ հիմքի վրայ կանգնելը:

Այժմ մինխտարութիւնը հարցիս քննութիւնը թողել է «Նաւթագործների ժողովին», որ բացուելու է դեկտ. 8-ին: